ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ ԱՐԱԳԱԾՈՏՆ

# ԱՐԱԳԱԾԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

www.aragac.am

*Արագածյան փողոց 1-ին նրբ. 5; էլ-փոստ: aragats.aragatsotn@mta.gov.am; CM-Aragats@list.ru*
*Հեռ: +37491207705: +37493815740:*

*«07» մարտի 2014թ.*

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին

Հարգելի մասնակից,

Արագածի համայնքապետարանը «ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Արագածի «Լիա Տեր-Ղևոնդյան»-ի անվան մանկապարտեզի կարիքների համար անհրաժեշտ է ձեռք բերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր կազմակերպության միջև կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները: Ապրանքների մատակարարման պայմանները սահմանվում են կից ներկայացվող պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցին (Հավելված 2) համապատասխան:

Ընթացակարգի ծածկագիրն է «ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01»:

Գնման առարկա է հանդիսանում Արագածի «Լիա Տեր-Ղևոնդյան»-ի անվան մանկապարտեզի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, Արագածոտն, Արագած, Արագածյան փողոց 1-ին նրբ. 5 հասցեով՝ Արագածի համայնքապետարան, մինչև 2014թ. մարտի 18-ը, ժամը 11:00:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արթուր Սարգսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Արագածի «Լիա Տեր-Ղևոնդյան»-ի անվան մանկապարտեզի կարիքների համար սննդամթերքի մատակարարման (որը կազմված է յոթանասուներեք չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որը ներկայացված է սույն հրավերի N1 հավելվածում:

Հայտերը կբացվեն Արագածի համայնքապետարանում, ՀՀ Արագածոտն մարզ, Արագած համայնք, Արագածյան փողոց 1-ին նրբ. 5 հասցեով, **2014թ. մարտի 18-ին, ժամը 11:00- ին:**

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել «ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահ-մանված կարգով /մեկ բնօրինակ և երկու պատճեն/:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Արագածի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ CM-Aragats@list.ru:

Արագած համայնքի ղեկավար՝ Գ. Պողոսյան

*Հավելված N 1*
*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*«ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**

**Դ Ի Մ Ո Ւ Մ**

_______________________________________________-ն հայտնում է, որ ցանկություն ունի մաս-

(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

նակցելու Արագածի համայնքապետարանի կողմից «ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» ծածկագրով հայտարարված ընթա-ցակարգին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________________________-ն հայտնում և հավաստում է,

(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

որ իր հիմնադրի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնե-մաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառ-վում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_______________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ չունի գե-

(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

րիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

___________________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝

(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

____________________________________:

(Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե)

______________________________________________ ______________________

(Մասնակցի անվանումը (անունը), ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

**Կ.Տ**

«_____»____________ 2014թ.

*Հավելված N 2*
*«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով*
*ընթացակարգի հրավերի*
*«ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» ծածկագրով*
*ընթացակարգի գնահատող հանձնաժողովին*

**ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ**

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ____________________________ ___________________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

(Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը))

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակ | Արժեք* (Մեկ միավորի գնի մասով) | ԱԱՀ** (Մեկ միավորի գնի մասով) | Մեկ միավորի առաջարկված գինը /տառերով և թվերով/ | Առաջարկված ընդհանուր /չափաբաժնի/ գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7=5+6* | *8=7X4* |
| 1 | | | | | | | |
| 2 | | | | | | | |
| … | | | | | | | |

**    5-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 6-րդ սյունակում:***

________________________________________________                    _______________________

(Մասնակցի անվանումը (անունը), ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)                    (ստորագրությունը)

**Կ.Տ**

«_____»_____________ 2014թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԱՀ-ՇՀԱՊՁԲ-1/1»

գ.Արագած «_____»_____________ 2014 թ.

__________________-ը, ի դեմս տնօրեն _____________-ի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և _________________-ն, ի դեմս տնօրեն _______________-ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **սննդամթերքը** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Մատակարարման պայմանները**

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 Հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցին համապատասխան:

2,3 Պայմանագրի N2 հավելվածում նշված ապրանքների քանակները նախնական քանակներն են: Իսկ հիմնական մատակարարման ենթակա քանակները կկատարվեն Պատվիրատուի ներկայացրած պատվեր-պահանջագրերի հիման վրա:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

***3.1 Գնորդն իրավունք ունի՝***

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից:

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը:

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

***3.2 Գնորդը պարտավոր է՝***

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

***3.3 Վաճառողն իրավունք ունի՝***

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է դրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

***3.4 Վաճառողը պարտավոր է՝***

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժն ու տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն պայմանագրի 3.1.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

**4. Ապրանքի գինը և վճարման կարգը**

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է _________(______________) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 Հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 Հավելվածով՝ Վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը սույն կետի պայմաններով իրականացվում այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

**5. Ապրանքի որակը**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

**6. Ապրանքի հանձնումը և ընդունումը**

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**7. Կողմերի պատասխանատվությունը**

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնված Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն Պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը, տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

7.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. Այլ պայմաններ**

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև Պայմանագրի կնքումը Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց

թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.3 Սույն Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր Պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

Սույն Պայմանագրում չի կարող կատարվել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները, խնայողությունները և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասներն են:

Սույն Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այդ գործարքները և դրանից բխող պարտավորությունները դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ Պայմանագիր կնքած անձը:

9.5 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.6 Սույն Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.7 Սույն Պայմանագիրը կազմված է __(__) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Պայմանագրի NN 1, 2, 3 և 4 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

### 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Գնորդ | Վաճառող |
|---|---|
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| ________________ | ________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«__»__________________2014թ. կնքված*
*«ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Արագածի «Լիա Տեր-Ղևոնդյան»ի անվան մանկապարտեզի կարիքների համար շրջանակային համաձայնագրերի միջոցով սննդամթերքի գնման

| Հ/Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | չափման միավոր | Մատակարարումը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Մեղր | Բնական մեղր՝ ծաղկային կամ մեղրացողային, առանց մեխանիկական խառնուրդների և խմորման, ջրի զանգ-վածային բաժինը՝ 18,5 %-ից ոչ ավելի, սախարոզի զանգվածային մասը (ըստ բացարձակ չոր նյութի)՝ 5,5%-ից ոչ ավելի: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտան-գության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | կգ | Ամսեկան 1 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 2 | Ձու | Ձու սեղանի կամ դիետիկ, 2-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահպանման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 90 օր, ՀՍՏ 182-2012 Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ N2-III-4.9-01-2010 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի, "Սննդամթերքի անվտան-գության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | հատ | Ամսեկան 4 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 3 | Կաղամբ | Թարմ գլուխկաղամբ՝ մանրածախ առևտրի ցանց և հանրային սննդի օբյեկտներ մատակարարման և իրացման համար: Թարմ գլուխկաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքինտեսքը՝ գլուխներըթարմ, ամբողջական, մաքուր,առողջ, լրովին ձևա-վորված, առանցհիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հո-տով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փըխ-րուն, վաղահաս կաղամբը՝ տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածք-ներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշա-հատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակ-նըշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ բան-ջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀօրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 4 | Բրինձ | Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահա-նմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի. | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 5 | Կարտոֆիլ | Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 6 | Ոսպ | Երեք տեսակի, համասեռ, մաքուր, չոր՝ խոնավությունը՝ (14,0-17,0) % ոչավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 7 | Սիսեռ | Սիսեռ ԳՕՍՏ 8758-76, համասեռ, մաքուր, չոր խոնավությունը՝ (14,0-20,0) % ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 8 | Բազուկ | Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների:Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 9 | Գազար | Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. Դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամըթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 10 | Սոխ | Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 11 | Ոլոռ | Չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 12 | Բիբար | | | Ամսեկան 1 անգամ |
| 13 | Դդմիկներ | | | Ամսեկան 1 անգամ |
| 14 | Վարունգ | Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և ‘Սննդամթերքի անվտանգության մասին’ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 2 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 15 | Չամիչ | | կգ | Ամսեկան 1 անգամ |
| 16 | Խնձոր | Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի”և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 2 անգամ պատվիրատուի նշած ժամկետում |
| 17 | Տանձ | | կգ | Ամսեկան 2 անգամ |
| 18 | Ծիրան | | կգ | Ամսեկան 2 անգամ |
| 19 | Բալ | | կգ | Ամսեկան 2 անգամ |
| 20 | Սալոր | | կգ | Ամսեկան 2 անգամ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| 21 | Խաղող | | կգ | Ամսեկան 2 անգամ |
| 22 | Տավարի միս | Տավարի կիսամսեղիքով, պիտակավորված, ընդհանուր քանակի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 23 | Թարմ թռչնամիս | Առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված “Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 24 | Տավարի մսի պահածո | Պահածոներ տավարի մսի բարձր տեսակի, հերմետիկ փակ մետաղական տարաներով: Մսի և ճարպի զանգվածային մասը ոչ պակաս 54%-ից, այդ թվում՝ ճարպի զանգվածային մասը ոչ ավելի 17%-ից, քլորիդների զանգվածային մասը 1,2-1,5%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 25 | Տավարի աղացած միս | Միս տավարի պաղեցրած, փափուկ միս առանց ոսկորի, զարգացած մկաններով, պահված 0 oC -ից մինչև 4 oC ջերմաստիճանի պայմաններում՝ 6 ժ-ից ոչ ավելի, I պարարտության, պաղեցրած մսի մակերեսը չպետք է լինի խոնավ, ոսկորի և մսի հարաբերակցությունը՝ համապատասխանաբար 0 % և 100 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված «Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 26 | Լոլիկ | Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և ‘Սննդամթերքի անվտանգության մասին’ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 27 | Կանաչի | Կանաչի տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և ‘Սննդամթերքի անվտանգության մասին’ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կապ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 28 | Սմբուկ | Սմբուկ թարմ: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 29 | Ձեմ | Ձեմ՝ տարբեր մրգերի, 1-ին տեսակի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 30 | Տոմատի մածուկ | Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարո-ղությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի : | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 31 | Բուսական ճագման ձեթ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր և I տեսակների, չզտված, չհոտազերծված: Անվտանուգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ ‘"Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենգքի 8-րդ հոդվածի: | լիտր | Ամսեկան 1 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| 32 | Բուսական ճագման յուղ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզմման եղանակով, բարձր և I տեսակների, չզտված, չհոտազերծված: Անվտանուգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, մակնշումը՝ ‘"Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենգքի 8-րդ հոդվածի: | լիտր | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| **33** | Խտացրած կաթ | Խտացրած կաթ շաքարով, խոնավությունը՝ 26,5 %-ից ոչ ավելի, սախարոզը 43,5 %-ից ոչ պակաս, կաթնային չոր նյութերի զանգվածային մասը՝ 28,5 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 48 0T-ից ոչ ավելի, պիտանելիութ-յան մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնը-շումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **34** | Թթվասեր | Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակ-նըշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթ-նամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **35** | Կարագ | Սերուցքային, յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **36** | Պանիր | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **37** | Հնդկաձավար | Հնդկաձավար I կամ II տեսակների, խոնավությունը՝ 14,0 %-ից ոչ ավելի, հատիկները՝ 97,5 %-ից ոչ պակաս: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 70 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 1 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **38** | Հաց | Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | կգ | Յուրաքանչյուր աշխատանքային օր |
| **39** | Շաքարավազ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **40** | Կոնֆետ, կարամել | Կարամելկաթնային, պոմադային, մրգային, դոնդողային, դոնդողամրգային, նշակարկանդային, գրիլյաժային, պրալինե հավելանյութերով:Կախված կոնֆետի տեսակից խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ նրբաթիթեղի և թղթի մեջ, չփաթաթված՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդհոդվածի: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| **41** | Մակարոնեղեն | Մակարոնեղեն անդրոժ խմորից, կախված ալյուրի տեսակից և որակից՝ A (պինդ ցորենի ալյուրից), Б (փափուկ ապակենման ցորենի ալյուրից), B (հացաթխման ցորենի ալյուրից), չափածրարված և առանց չափածրարման: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | Ամսեկան 4 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **42** | Թեյ | Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | Ամսեկան 1 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |
| **43** | Համեմունքներ | | տուփ | Ամսեկան 1 անգամ |
| **44** | Աղ | Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՏՍ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: | կգ | Ամսեկան 2 անգամ պատվի-րատուի նշած ժամկետում |

**Գնորդ**

______________________________

______________________________

______________________________

______________________________

(ստորագրություն)

**Կ.Տ**

**Վաճառող**

______________________________

______________________________

______________________________

______________________________

(ստորագրություն)

**Կ.Տ**

*Հավելված N2*
*«__»___________________2014թ. կնքված*
*«ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» գնման պայմանագրի*

**Գնման ժամանակացույց**

Արագածի «Լիա Տեր-Ղևոնդյան»ի անվան մանկապարտեզի կարիքների համար սննդամթերքի գնման պայմանագրի

| Հ/Հ | Անվանումը | չափման միավոր | Ամիսներ | | | | | | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | |
| 1 | 2 | 4 | 5 | | | | | | | | | | | | 6 |
| 1 | Մեղր | կգ | | | | 1.0 | | | 1.0 | | | | | | 2.0 |
| 2 | Ձու | հատ | | | | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | 100.0 | | 800.0 |
| 3 | Կաղամբ | կգ | | | | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 20.0 | 10.0 | | 150.0 |
| 4 | Բրինձ | կգ | | | | 10.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 10.0 | 5.0 | | 60.0 |
| 5 | Կարտոֆիլ | կգ | | | | 150.0 | 150.0 | 150.0 | 150.0 | 150.0 | 140.0 | 10.0 | 100.0 | | 1000.0 |
| 6 | Ոսպ | կգ | | | | 10.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 5.0 | 5.0 | | 50.0 |
| 7 | Սիսեռ | կգ | | | | 10.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 5.0 | 5.0 | | 50.0 |
| 8 | Բազուկ | | | | | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 2.0 | | 30.0 |
| 9 | Գազար | կգ | | | | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 2.0 | | 30.0 |
| 10 | Սոխ | կգ | | | | 10.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 10.0 | 5.0 | 10.0 | 5.0 | | 60.0 |
| 11 | Ոլոռ | կգ | | | | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | | 40.0 |
| 12 | Բիբար | կգ | | | | | | | 2.0 | 3.0 | 3.0 | 2.0 | | | 10.0 |
| 13 | Դդմիկներ | կգ | | | | | | | 2.0 | 3.0 | 3.0 | 2.0 | | | 10.0 |
| | | | | | | | | | | | | | | | |

| 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | 5 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Վարունգ | կգ | | | | | | | 2.0 | 3.0 | 3.0 | 2.0 | | | 10.0 |
| 15 | Չամիչ | կգ | | | | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | 2.0 | 2.0 | 1.0 | 1.0 | | 10.0 |
| 16 | Խնձոր | կգ | | | | 10.0 | 10.0 | 10.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 10.0 | | 100.0 |
| 17 | Տանձ | կգ | | | | 2.0 | 2.0 | 2.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 4.0 | | 50.0 |
| 18 | Ծիրան | կգ | | | | | | | 15.0 | 15.0 | 20.0 | | | | 50.0 |
| 19 | Բալ | կգ | | | | | | | 5.0 | 10.0 | 5.0 | | | | 20.0 |
| 20 | Սալոր | կգ | | | | | | | 5.0 | 10.0 | 5.0 | | | | 20.0 |
| 21 | Խաղող | կգ | | | | | | | 5.0 | 10.0 | 5.0 | | | | 20.0 |
| 22 | Տավարի միս | կգ | | | | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | | 40.0 |
| 23 | Թարմ թռչնամիս | կգ | | | | 8.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 4.0 | | 60.0 |
| 24 | Տավարի մսի պահածո | կգ | | | | 3.0 | 3.0 | 3.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 3.0 | 2.0 | | 20.0 |
| 25 | Տավարի աղացած միս | կգ | | | | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 2.0 | | 30.0 |
| 26 | Լոլիկ | կգ | | | | | | | 2.0 | 2.0 | 3.0 | 3.0 | | | 10.0 |
| 27 | Կանաչի | կապ | | | | 10.0 | 10.0 | 10.0 | 10.0 | 15.0 | 15.0 | 10.0 | 10.0 | | 90.0 |
| 28 | Սմբուկ | կգ | | | | | | | 2.0 | 2.0 | 3.0 | 3.0 | | | 10.0 |
| 29 | Ջեմ | կգ | | | | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 1.0 | | 15.0 |
| 30 | Տոմատի մածուկ | կգ | | | | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 3.0 | 4.0 | 4.0 | 3.0 | | 30.0 |
| 31 | Բուսական ծագման ճեթ | լիտր | | | | 1.5 | 1.0 | 1.0 | 1.5 | 1.0 | 1.0 | 1.0 | 1.0 | | 9.0 |
| 32 | Բուսական ծագման յուղ | լիտր | | | | 15.0 | 10.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 15.0 | 10.0 | | 110.0 |

| 1 | 2 | 3 | 4 | | | | | | | | | | | | 5 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **33** | Խտացրած կաթ | կգ | | | | 3.0 | 3.0 | 3.0 | 3.0 | 4.0 | 3.0 | 3.0 | 3.0 | | 25.0 |
| **34** | Թթվասեր | կգ | | | | 3.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 3.0 | | 30.0 |
| **35** | Կարագ | կգ | | | | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | | 40.0 |
| **36** | Պանիր | կգ | | | | 3.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 3.0 | | 30.0 |
| **37** | Հնդկաձավար | կգ | | | | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | 5.0 | | 40.0 |
| **38** | Հաց | կգ | | | | 120.0 | 130.0 | 160.0 | 170.0 | 170.0 | 170.0 | 160.0 | 120.0 | | 1200.0 |
| **39** | Շաքարավազ | կգ | | | | 25.0 | 25.0 | 25.0 | 30.0 | 30.0 | 30.0 | 30.0 | 15.0 | | 210.0 |
| **40** | Կոնֆետ, կարամել | կգ | | | | 5.0 | 6.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 8.0 | 7.0 | | 58.0 |
| **41** | Մակարոնեղեն | կգ | | | | 3.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 4.0 | 3.0 | | 30.0 |
| **42** | Թեյ | կգ | | | | 0.2 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.1 | | 1.0 |
| **43** | Համեմունքներ | տուփ | | | | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 3.0 | 3.0 | 4.0 | 2.0 | | 20.0 |
| **44** | Աղ | կգ | | | | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.0 | 1.0 | | 15.0 |

**Գնորդ**

__________________________

__________________________

__________________________

__________________________

(ստորագրություն)

**Կ.Տ**

**Վաճառող**

__________________________

__________________________

__________________________

__________________________

(ստորագրություն)

**Կ.Տ**

*Հավելված N 3*
*«__»__________________2014թ. կնքված*
*«ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» գնման պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| |
|---|
| Ֆինանսավորումը կկատարվի յուրաքանչյուր ամիս գնման ժամանակացույցում նշված քանակներին և ներկայացված պատվեր-պահանջագրերին համապատասխան՝ հիմք ընդունելով ընդունման-հանձնման արձանագրությունը: |

Վճարման ենթակա գումարները կներկայացվեն աճողական կարգով:

Պայմանագրի շրջանակներում բոլոր վճարման պահանջները պետք է ներկայացվեն անմիջապես ստորև նշված շահառուներին և ստացված ապրանքների համար վճարումներ կկատարեն անմիջապես վերը նշված շահառուները՝ հետևյալ բանկային հաշիվներից.

| **Գնորդ** | **Վաճառող** |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ** | **Կ.Տ** |

*Հավելված N 4*
*«__»__________________2014թ. կնքված*
*«ԱՀ-ՇՀԱՊՁԲ-11/2-01» գնման պայմանագրի*

| **Գնորդ** | **Վաճառող** |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |
| ______________________________ | ______________________________ |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N __
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«___» «___________» 2014 թ.

Պայմանագրի անվանումը՝ ________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__» ______________ 2014 թ.

Պայմանագրի համարը՝ ________________

Գնորդը՝ ի դեմս ________________________________________________ և Վաճառողը՝ ի դեմս __________________________________________, հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը «__» ________________ 2014թ-ից «__» ______________ 2014թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկաների նկարագիրը | Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (ՀՀ դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանա-կացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Աշխատանքը հանձնեց** | **Աշխատանքը ընդունեց** |
|---|---|
| ______________________________ | ______________________________ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |